

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/2

11 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց ՀԱՌԴ Գլխավոր ՍՊԸ 28.08.2012թ. վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 17.08.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 193466 որոշման դեմ:

ՀԱՌԴ Գլխավոր ՍՊԸ-ի բողոքում մասնավորապես նշված է.

ՀԱՌԴ Գլխավոր ՍՊԸ-ն Կենտրոնի ՀՏ պետի կողմից 17.08.2012 թ-ին կայացված թիվ 193466 որոշումը ստացել է 20.08.2012 թ-ին: Սույն որոշումը կազմվել է ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 170.3 հոդվածի հիմքով: Որոշման կայացման համար հիմք է հանդիսացել ընկերության կողմից ՀՏ ներկայացված երկրորդ եռամսյակի հաշվետվությունները, որոնց համաձայն հարկերի և սոցիալական վճարների գծով ընկերության պետական բյուջեի նկատմամբ չմարած պարտավորությունը 20.07.2012թ-ի դրությամբ կազմել է 1.446.060 դրամ: Ընկերությունը մինչև 06.08.2012թ-ը՝ ՎԻՎ արձանագրության կազմման օրը, վճարած է եղել 1.438.360 դրամ: Փաստորեն ընկերության հարկային պարտավորությունը կազմել է 7.700 դրամ: Գտնում եմ, որ սովյալ դեպքում Կենտրոնի ՀՏ պետի կողմից վարչական տույժ նշանակելու որոշումը ոչ իրավաչափ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 21-րդ և 33-րդ հոդվածներով ընկերության տնօրենը խնդրում է անվավեր ճանաչել Կենտրոնի ՀՏ պետի 17.08.2012թ-ի թիվ 193466 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության հաշվապահի և Կենտրոնի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.09.2012թ-ի թիվ 27 որոշման համաձայն, սույն բողոքի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Նշվեց նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի համաձայն. Հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարումները սահմանված ժամկետներում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից սահմանված ժամկետներում չեն վճարվել հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարումները: Մասնավորապես, ընկերության կողմից Կենտրոնի ՀՏ երկրորդ եռամսյակի համար ներկայացված հաշվետվությունների համաձայն, հարկերի և սոցիալական վճարների գծով ընկերության պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների չափը 20.07.2012թ-ի դրությամբ կազմել է 1.446.060 դրամ, որը սահմանված ժամկետում չի վճարվել: Այսինքն, առկա է եղել հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարումները սահմանված ժամկետներում չվճարելու փաստ, որը և հիմք է հանդիսացել 06.08.2012թ. վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1512 արձանագրության կազմման ու ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 17.08.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 193466 որոշման ընդունման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ հարկային ծառայության մասին ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀԱՌԴ Գլխավոր ՍՊԸ վարչական բողոքը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ